


Ի՞նչ է ՋԵՐՄԱՅԻՆ ՅՆՅՈՒՄԸ.

ՋԵՐՄԱՅԻՆ ՅՆՅՈՒՄԸ ԲԱՐՁՐ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆԻՅ (ՍՈՎՈՐԱԲԱՐ ԱՎԵԼԻ ՔԱՆ 38 °C) ԱՌԱՋԱՅԱԾ ՅՆՅՈՒՄՆ Է

- 100 երեխայից մոտ 3-ն ունենում են ջերմային ցնցումներ
- Չայտնի են ընտանեկան դեպքեր
- Չանդիպում է 6 ամսականից մինչև 6 տարեկան երեխաների մոտ
Ջերմային ցնցումը սկսվում է հանկարծակի և հաճախ ջերմության առաջին բարձրացման ժամանակ, սակայն կարող է լինել նաև ջերմային հիվանդության ընթացքում՝ ցանկացած պահի
- Ջերմային ցնցման ժամանակ երեխաները դառնում են անգիտակից, մարմինը կարող է ձգվել, կարող են դիտվել դիֆմիկ ցնցումներ ամբողջ մարմնով, հաճախ աչքերը բաց են և հառած դեպի վեր: Դեմքի գույնը կարող է լինել կապույտ, կարմիր կամ գունատ: Ցնցումները սովորաբար տևում են ոչ ավել քան 5 ր, սակայն կարող են դիտվել նաև ավելի երկարատև ցնցումներ: Ցնցումից հետո երեխաները կարող են լինել քնկոտ:
- Բարձր ջերմային ցնցումներն այն ցնցումներն են, որոնք տևում են ավելի քան 15 րոպե, կամ կրկնվում են 24 ժամվա ընթացքում, կամ ախտահարում են մարմնի միայն մի կեսը, որից հետո երբեմն դիտվում է մարմնի համապատասխան կեսի ժամանակավոր թուլություն:
- Ջերմային ցնցումն եպիլեպսիա չէ!

ՈՐՈ՞ՇՔ ԵՆ ՋԵՐՄԱՅԻՆ ՅՆՅՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ.

- Մահվան դեպքեր՝ կապված ջերմային ցնցման հետ, հայտնի չեն
- Վնասվածքներ կամ սննդի անցում դեպի շնչուղիներ ցնցման ընթացքում լինում են շատ հազվադեպ
- Ջերմային ցնցումները չեն ազդում նյարդաբանական կամ մտավոր զարգացման վրա
- Դետագայում եպիլեպսիայի զարգացման ռիսկը ցածր է
- Քանի որ ջերմության հիմքում կարող է լինել լուրջ հիվանդություն, ցնցումից հետո անհրաժեշտ է խորհրդակցել կամ զանգել բժշկին



ԿԱՐՈ՞Ղ Ե ԶԵՐՄԱՅԻՆ ՅՆՅՈՒՄԸ ԿՐԿՆԱԵԼ.

- Զերմային ցնցում տարած երեխաների մեծ մասի դեպքում կյանքի ընթացքում այդ ցնցումը լինում է միակը
- Մոտավորապես 30% դեպքերում դիտվում է երկրորդ ջերմային ցնցումը, իսկ մոտավորապես 10% դեպքերում լինում են երեք և ավելի ջերմային ցնցումներ

Ի՞ՆՉ Ե ՊԵՏՔ ԱՆԵԼ ԶԵՐՄԱՅԻՆ ՅՆՅՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

- Չկան միջոցներ, որոնք լիարժեք կկանխեն ջերմային ցնցումները երկարատև հակացնցումային դեղամիջոցների օգտագործումը չի
- կիրառվում, քանի որ դրանք ունեն հնարավոր կողմնակի ազդեցություններ, իսկ ջերմային ցնցումների ելքը բարենպաստ է ջերմիչեցնողների պրոֆիլակտիկ օգտագործումը չի խրախուսվում

Ի՞ՆՉ Ե ՊԵՏՔ ԱՆԵԼ ԶԵՐՄԱՅԻՆ ՅՆՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ.

1. հանգստություն պահպանել! Զերմային ցնցումն անվնաս է, եթե նույնիսկ այն այդպիսի տպավորություն չի թողնում
 2. հեռացնել՝ առարկաները, որոնք կարող են վնասել երեխային
 3. նայել՝ ժամացույցին՝ չափելու ցնցման տևողությունը
 4. եթե ցնցումը տևում է 5 րոպեից ավել, կատարել՝ [հիպոթեթիկ միկրոհոգնա (բժշկի նշանակած դեղաչափով)]
 5. եթե ցնցումը 10 րոպեների ընթացքում չի դադարում, կանչել՝ [2 տապ օգնություն (հեռ. 103)].
 6. քանի որ որոշ երեխաներ ցնցումից հետո փսխում են, անհրաժեշտ է ցնցումից հետո/ցնցման ժամանակ երեխային պառկեցնել կողքի վրա
- Զի՛ր կարելի թափահարել կամ բռնել երեխային, բռնի ուժով փորձել բացել բերանը, առարկա դնել ատամների արանքը, բերան-բերան շնչառություն տալ (երեխաները հաճախ կապտած են ցնցման ժամանակ) կամ վրան ջուր լցնել:



ARABKIR
JOINT MEDICAL CENTRE
ԱՐԱՔԿԻՐ
ԲԺՇԱԿԱՆ ՀԱՄԱԻՐ

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF CHILD AND ADOLESCENT HEALTH
Mamikoninants str. 30, Yerevan, 375014 Armenia
Tel.: (374 1) 236 883, Fax: (374 1) 284 170, E-mail: aramc@arminco.com